ԿՐԹԱԿԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԿՈՊՈՎԱՆ՝ ԱԽԱԼՑԻԽԵԻ ԹԻՎ 3 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի հրամանագրով, նախարարության հարտարարած մրցույթի արդյունքում, Ախալցիխեի թիվ 3 հայկական հանրային դպրոցի տնօրեն է նշանակվել Սուսաննա Ակոպովան: Նա այդ պաշտոնում փոխարինեց Սվետլանա Հարությունյանին, ով տնօրենի ժամանակավոր պարտականությունները կատարում էր վերջին վեց տարիների ընթացքում: Այժմ նա շարունակում է աշխատել նույն դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցչուհի:

Արդեն 38 տարի է, ինչ Սուսաննա Ակոպովան Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցում ռուսաց լեզու է դասավանդում: Բարձրագույն կրթությունն ստացել է Հայաստանում, ավարտել է Գյումրիի (Լենինական) Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը:

Նորանշանակ տնօրենը գտնում է, որ, այսօրվա դրությամբ, դպրոցի ամենակարեւոր հիմնախնդիրից մեկը ջեռուցումն է:

- Այս օրերին նախարարությունից ժամանած մասնագետները պատրաստեցին նոր նախագիծ ու խոստացան, որ գալիք ձմռանը դպրոցի շենքում կունենանք ջեռուցում,- ասաց Սուսաննա Ակոպովան եւ շարունակեց,- մի քանի օրից երկրում սկսվում է ուսուցիչների գրանցումը: Դպրոցում աշխատում է 60 մանկավարժ, նրանցից դեռեւս միայն երեքն են ավագ ուսուցչի կարգավիճակով: Հավատում եմ, որ մեր ուսուցիչներից շատերը հաջողությամբ կանցնեն ատեստավորումը, կստանան բարձր միավորներ ու կդառնան ավելի բարձր որակավորում ունեցող ուսուցիչներ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ընթացիկ տարվա մարտի 1-ին Թբիլիսիի քաղաքապետարանը սկսել է սոցիալապես անպաշտպան ուսանողների ուսման վարձի ֆինանսավորման համար փաստաթղթերի ընդունումը:

Ինչպես տեղեկացրին քաղաքապետարանում, սոցիալապես անպաշտպան եւ գերազանցիկ ուսանողների աջակցության ծրագրի շրջանակներում, կֆինանսավորվեն Թբիլիսիում գրանցված այն ուսանողները, ովքեր սոցիալապես անպաշտպան ընտանիքներից են, ում վարկանիշային միավորը միասնական բազայում 70 հազարից քիչ է, եւ ովքեր սովորում են հեղինակավոր, հավաստագրված պետական ու մասնավոր բուհերում բակալավրի, մագիստրոսի կամ դոկտորանտի աստիճանում:

Նշենք, որ դոկտորանտուրայում սովորող ուսանողները քաղաքապետարանից կստանան առաջին ֆինանսական օգնությունը: Նոր կարգի համաձայն, ակադեմիական բարձր առաջադիմության ուսանողները կֆինանսավորվեն դրամաշնորհով՝ ուսման վարձի 50-100 տոկոսի չափով:

Ավելացնենք, որ 2015 եւ 2016 թվականներին, վերոնշյալ ծրագրի շրջանակներում, ֆինանսավորվել է 4500 ուսանող:

ԹԱՏՐՈՆ

ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԱՐՏԱՎԱԶԴ» ՓԱՌԱՏՈՆԻՆ

Սովորաբար, երկուշաբթին Հայաստանում թատերական օր չի համարվում, սակայն ընթացիկ տարվա մարտի 13-ը եղավ բացառություն: Թատրոնի բազում երկրպագուներ մինչեւ ներկայացումը սկսելը հավաքվել էին Երեւանի Մայր թատրոնի՝ Գ.Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի մուտքի մոտ:

Այդ օրը, թատերական ամենամյա «Արտավազդ» փառատոնի շրջանակներում, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը հանդես եկավ ներկայացմամբ՝ իր վրաց ճանաչված գրող Նոդար Դումբաձեի «Սպիտակ դրոշներ» երկի հիման վրա ստեղծված «Մեղադրական եզրակացություն» պիեսը՝ Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի բեմադրությամբ եւ Վալերի Ամիրաղյանի ու Մալխաս Իոբաշվիլու երաժշտական եւ գեղարվեստական ձեւավորմամբ:

Ներկայացմանը ներկա էր Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն:

...Հանդիսատեսը ակտիվորեն ոգեւորում էր Նարեկ Բայանդուրյանի (Տիգրան Գուլոյան), Նանո Պողոսյանի (մայր), Դավիթ Բարսեղյանի (Լիմոն), Սերգեյ Սաֆարյանի (Շոշիա), Լիկա Օգանեզովա-Նոդիայի (բժշկուհի), Արթուր Գասպարյանի (Ճիճիկո Գոգոլ), Արսեն Մկրտչյանի (Գիգլա Մոշիաշվիլի), Էդուարդ Մուրադյանի (Ճեիշվիլի), Հենրիխ Պետրոսյանի (Գամցեմլիձե), Էրիկ Հարությունյանի (Մեբորիշվիլի), Արամ Միքայելյանի (Զազա Նադել էր այդ պիեսի պրեմիերան Գուրիայի Օզուրգեթի քաղաքում, Նոդար Դումբաձեի հայրենիքում: Այնտեղ հանդիսատեսին հաճելի անակնկալ մատուցվեց: Ներկայացումը բեմադրվեց վրացերենով, ինչը հաճելիորեն զարմացրեց հանդիսատեսին, եւ արձանքն էլ համապատասխան էր՝ բուռն ծափահարություններ... Նույն արձագանքն էր նաեւ Թբիլիսիի Մարջանիշվիլու եւ Ռուսթավելու անվան թատրոններում:

Եվ ահա Հայաստանի բեմահարթակներում նույն դերասանները ներկայացումը ցուցադրեցին հայերենով:

Երկու օր անց ադամյանցիները մեկնեցին Վանաձոր, որտեղ իրենց ներկայացումը ներկայացնելու էին տեղի թատերասերների դատին:

Մարտի 16-ին, ադամյանցիները վերադարձան Թբիլիսի:

ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆ
Լուսանկարները՝ հեղինակի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՄԵՆՔ ՈՒԶՈՒՄ ԵՆՔ ԴԱՌՆԱԼ ԼՐԱԳՐՈՂ

Մարտի 15-ին, Վրաստանի հանրապետական «Վրաստան» թերթի խմբագրությունում, տեղի ունեցավ Եվրամիության խորհրդի եւ Եվրամիության դեսպանության նախաձեռնությամբ, Վրաստանում Եվրախորհրդի գրասենյակի ու «Վրաստան» թերթի կազմակերպմամբ՝ «Վարժանքներ ապագա մասնագիտության՝ լրագրողների համար» ծրագրի շրջանակներում իրականացվող հանդիպում, որին մասնակցեցին Թբիլիսիի հանրային հայկական թիվ, թիվ 104 եւ 103 դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտներ:

Դպրոցականների հետ զրուցեց թերթի գլխավոր խմբագիր, Վրաստանի վաստակավոր լրագրող Վան Բայբուրթյանը: Նա հանգամանալից պատմեց լրագրության մասնագիտության, նրա մասնագիտական սկզբունքների մասին, լրագրողի ունենալիք առաքելությունը ամեն մի երկրի սոցիալական, հասարակական ու քաղաքական կյանքի լուսաբանման ու մտքի ձեւավորման հարցերում: Խոսեց գրելու արվեստի եւ գրականության ընթերցման մշակույթի մասին: Ծանոթացրեց ընթերցման այն գաղտնիքներին, որոնք կօգնեն նրանց առավելագույն գիտելիքներ ու իմաստություն ստանալ այդ գրքերից: Աշակերտները սիրով ընդունեցին նրանց տրված լրագրողական անդրանիկ հանձնարարությունները, որոնք կիրապարակվեն «Վրաստանի» առաջիկա համարներում: Հանդիպումը շարունակվեց հարց-պատասխանի աշխույժ մթնոլորտում:

Հաջորդ հանդիպումները տեղի կունենան ապրիլի 1-ին, 2-ին, 8-ին, 9-ին՝ Մառնեուլիի, Ծալկայի, Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի շրջանների հայկական կրթօջախների բարձր դասարանների սաների հետ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՍՆՆԴԱԿԱՐԳ

ԱՐԱԳ ՍՆՈՒՆԴԸ ՎՏԱՆԳԱՎՈ՞Ր Է ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լսել եմ, որ խորհուրդ չի տրվում երեխաների հետ այցելել արագ սնման օբյեկտներ, թեպետ դրա ոչ մի բացատրությունը չի ներկայացվում: Գույե՛ք, դո՞ւք պարզաբանեք:

Հ. Գրիգորյան

Թբիլիսի

Որքան էլ տարօրինակ լինի, արագ սնունդը երեխաների համար, իրոք, վտանգավոր է: Չէ՞ որ համբուրգերի եւ գազավորված հյութերի ամենամեծ երկրպագուները երեխաներն ու դեռահասներն են: Բժիշկները դրանում համոզված են, քանի որ աճող սերնդի օրգանիզմն այդ ժամանակ գտնվում է զարգացման փուլում: Իսկ թե ինչպիսին այն կլինի, մեծապես կախված է նաեւ նրանց առջեւ դրված ափսեի պարունակությունից: Չհավասարակշռված կերակրացանկի պատճառով առաջանում է ճարպակալում, խաթարվում է իմունային համակարգի եւ գեղձերի աշխատանքը: Դա, իր հերթին, բացասաբար է անդրադառնում երեխայի հետագա մտավոր եւ ֆիզիկական զարգացման վրա: Ժամանակակից երեխաները երեք անգամ ավելի շատ են գազավորված հյութեր խմում, քան նրանց հասակակից 1930-ականների սերունդը: ԱՄՆ-ում կան խմում նույնիսկ երկու տարեկան փոքրիկները:

Բժիշկները խորհուրդ են տալիս մինչեւ յոթ տարեկան երեխաների համար արագ սննդի կետերից ուտելիք չգնել: Առավել առողջարար է տապակած կարտոֆիլը փոխարինել յոգուրտով, իսկ գազավորված հյութը՝ կաթով:

Երեխաների համար հատկապես վտանգավոր է բազմակի անգամ օգտագործված յուղի մեջ տապակած կարտոֆիլը: Եթե փոքրիկը սկսում է կամակորություն անել, ապա գոնե ուշադրություն դարձրեք կարտոֆիլի գույնին: Այն պետք է ոսկեգույն լինի, իսկ եթե գույնն ավելի մուգ է, ուրեմն տապակող սարքի յուղը վերջին անգամ փոխվել է օրեր առաջ:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՎԱԽԸ

Վախը մարդուն ուղեկցում է ծննդյան օրից մինչեւ խորը ծերություն: Մենք մշտապես վախենում ենք ինչ-որ բանից, օրինակ՝ շատերը վախենում են սարդերից ու մկներից, շատերն իրենց աշխատանքը կորցնելուց, շատերն էլ մթությունից կամ փակ տարածքից:

Մենք չենք կարող լիովին ազատվել վախի զգացումից: Հենց այդ զգացումն է ամենաուժեղ գործոններից մեկը, որը խանգարում է մարդուն մինչեւ վերջ բացահայտել իր ներուժը եւ հաջողությունների հասնել: Սեփական վախը հաղթահարել կարողանալու համար, պետք է իմանալ, թե այն ինչպիսին է: Ով նախազգուշացված է, նա զինված է:

Վախի կենսաբանական նշանակությունը

Ծայրահեղ իրավիճակներում վախը մոբիլիզացնում է մարդու բոլոր ուժերն ակտիվ գործողությունների համար: Նման պահերին արյան մեջ ադրենալինի ուժեղ արտանետում է լինում, եւ մկանային հյուսվածքն արյան հետ ավելի շատ թթվածին ու սննդարար նյութեր է ստանում:

Շատ հնարավոր է, որ յուրաքանչյուր ոք վախենալիս կրծքավանդակում ծանրության զգացում է ունենում: Բացի դրանից, սթրեսային իրավիճակում մարդու դեմքը խիստ գունատվում է: Դա տեղի է ունենում, որովհետեւ արյունը մաշկից ու ստամոքսից ուժեղ հոսքով «գնում է» դեպի մկանները:

Վախի զգացումը մարդուն օգնում է արագ ռազմավարական որոշումներ ընդունել ինֆորմացիայի պակասի դեպքում: Հաղթահարելով վախը՝ ամեն մարդ իր նոր հնարավորություններն է հայտնաբերում եւ սկսում կյանքն ընկալել այլ տեսանկյունից: Նա սովորում է գնահատել կյանքն իր բոլոր դրսեւորումներով, շրջակա աշխարհը նրա համար ավելի վառ գույներ է ստանում, յուրաքանչյուր իրավիճակ գնահատվում է վախի զգացման հաղթահարման տեսանկյունից:

Ինչպիսին է լինում վախը

Իրական վախ - Մարդու ռեակցիան է արտաքին վտանգի հանդեպ: Այդ վախը կա յուրաքանչյուրի մոտ ենթագիտակցական մակարդակում, եւ այն ազդանշանային գործառույթ ունի. վտանգը շատ մոտ է, հարկ է կենտրոնացնել օրգանիզմի պահեստային ուժերը պաշտպանության պատրաստ լինելու համար:

Նյարդային վախ - Հաճախ լինում է առանց որեւէ պատճառի, բայց երբեմն դրա դրսեւորումը կախած է լինում որոշակի իրավիճակից եւ օբյեկտից: Նյարդային վախ ունեցող մարդիկ միշտ սպասում են ամենավատ բանին եւ ապրում ցանկացած պահի դժբախտության մշտական սպասումով:

Նյարդային վախը հոգեսոմատիկ ախտընթաց է, այսինքն՝ միաժամանակ ե՛ւ ֆիզիկական է, ե՛ւ հոգեբանական: Վախի ֆիզիկական դրսեւորումը կարող է արտահայտվել ուժեղ սրտխփոցով, շարժողական անհանգստությամբ կամ դողով, սառը քրտինքով, բերանում չորության զգացումով, լուծով:

Տարբեր ֆոբիաներ - Ֆոբիան անիրական վախն է, որը շատ խիստ խանգարում է բնականոն ապրելուն, աշխատելուն, մարդկանց հետ շփվելուն: Ցանկացած վախ կարող է պայմանավորված լինել որոշակի օբյեկտով կամ իրավիճակով:

Տարբեր ֆոբիաները սովորական վախերից տարբերվում են ոչ թե իմաստով, այլ ինտենսիվությամբ: Եթե մարդը, ով տառապում է ինչ-որ մի ֆոբիայով, իր վախի առարկային հազվադեպ է հանդիպում, ապա այն իրենից ոչ մի վտանգ չի ներկայացնում: Բայց եթե վախի պատճառը հաճախ է հանդիպում, ապա այն կարող է կյանքը փչացնել:

Մենության վախ - Որքան մարդը շատ է ինքնամփոփ դառնում եւ մարդկանցից հեռու մնում, այնքան շատ է նա իրեն դատապարտում մեկուսացման վտանգին: Դա վախի շատ տարածված տեսակն է, որը մարդուն ստիպում է նույնիսկ երբեմն շփվել այնպիսի մարդկանց հետ, ովքեր նրա համար տհաճ են:

Հասկանալի է, որ մարդը երբեմն ցանկանում է միայնակ մնալ եւ հանգստանալ շրջակա իրարանցումից: Բայց, եթե առանձնացումը երկար է տեւում, մարդուն սկսում է պարուրել վախը, թե նա այս աշխարհում արդեն ոչ ոքի պետք չէ: Մարդն ինքնին սոցիալական էակ է եւ ցանկանում է սիրված, գնահատված լինել, որպեսզի իրեն հասարակության լիիրավ անդամ զգա:

(Շարունակելի)

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ՉԱՊԼԻՆԻ ԳԼԽԱՐԿԸ՝ 215 ԴՈԼԱՐՈՎ

Անձրեւից, արեւից, քամուց ու ձյունից պաշտպանվելու համար, հին աշխարհի մարդիկ գլուխներին թռչունների բներ, կրիաների պատյաններ եւ այլեւայլ առարկաներ են օգտագործել: Ժամանակների փոփոխմանը զուգընթաց՝ գլխարկները սկսել են տարբեր իմաստներ ձեռք բերել: 1797թ. անգլիացի վաճառական Ջոն Հետերինգտոնը փողոց դուրս եկավ մետաքսե փայլուն գլանաձեւ գլխարկով: Նորարարին ծերբակալեցին եւ ստիպեցին 500 ֆունտ ստերլինգ վճարել: Մամուլը հաստատում էր, որ խողովակաձեւ գլխարկը մոռացության կմատնվի: Սակայն, շատ շուտով ցիլինդրը տղամարդկանց ամենատարածված գլխարկներից մեկը դարձավ:

Այժմ աշխարհը լի է անհամար ձեւերի ու նշանակության գլխարկներով, որոնք մարդիկ կրում են տարբեր նպատակներով, առիթներով ու իմաստներով: Սիդնեյում կազմակերպված աճուրդում Չերչիլի գլխարկը վաճառվել է 275 դոլարով, իսկ էյզենհաուերի եւ Չապլինի գլխարկները՝ 215 դոլարով:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԼԱՎ ԵՎ ԱՄԵՆԱՎԱՏ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԸ

Ճանապարհորդներն աշխարհում լավագույնն են ճանաչել Ֆինլանդիայի Հելսինկի-Վանտաա օդանավակայանը:

Ֆինլանդիայի մայրաքաղաքի օդային նավահանգիստը գլխավորել է 10 դիրքից բաղկացած այն ցուցակը, որը eDreams միջազգային տուրիստական գործակալության փորձագետների կողմից կազմվել է ավելի քան 65 հազար ճանապարհորդների գնահատականների հիման վրա:

Երկրորդ տեղը բաժին է ընկել Գլազգոյի (Մեծ Բրիտանիա) միջազգային օդանավակայանին: Երրորդ դիրքում հայտնվել է շվեյցարական Ցյուրիխի օդային նավահանգիստը: Չորրորդ եւ հինգերորդ հորիզոնականներն զբաղեցրել են գերմանական տրանսպորտային հանգույցները: Խոսքը վերաբերում է Մյունխենի Ֆրանց-Յոզեֆ Շտրաուսի անվան օդանավակայանին եւ Մայնի Ֆրանկֆուրտի ավիահանգրվանին:

Տասնյակում նվազման կարգով նաեւ տեղ են գտել Ժնեւի, Բանգկոկի (Սուվարնաբհումի), Թել Ավիվի (Բեն Գուրիոնի անվան օդային նավահանգիստ), Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյի եւ Դուբլինի (Իռլանդիա) օդանավակայանները:

Բացի այդ, զբոսաշրջիկները նշել են աշխարհի ամենավատ օդանավակայանը: Այն գերմանական Բեռլին-Շյոնեֆելդն է: Հակավարկանիշի եռյակում տեղ են գտել Լոնդոնի Լութոն եւ Նյու Յորքի Լա-Գուարդիա օդանավակայանները:

Այս ցուցակները կազմվել են՝ հաշվի առնելով այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են՝ մաքրությունը, զննման գոտու աշխատանքի արդյունավետությունը, ռեստորանների ու խանութների առկայությունը օդանավակայաններում եւ այլն:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝ /Հայտարարվում է եւ օրենքից դուրս:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924-1971)
Հայ ականավոր բանաստեղծ

Եղիր առատ՝ ծովի նման. ե՛ւ ընդունիր, ե՛ւ տուր նորից:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Օդին դրսից շատ մաքուր է ու զուլալ, բայց ներկում է քիթը եւ սեւացնում անունը:

ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ
(1860-1904)
Ռուս գրող, դրամատուրգ

... Այն մարդիկ, որոնք չափազանց շատ են խրախճանքներ ճաշակում, անխուսափելիորեն բթանում են:

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ
(1799-1850)
Ֆրանսիացի գրող

Նույնիսկ աշխարհի ամբողջ ոսկու գնով չի կարելի վաճառել սեփական ազատությունը:

ՍԵՐՎԱՆՏԵՍ
(1547-1616)
Իսպանացի գրող

Ամեն մարդ ցավի դարմանը գիտե, բացի ցավը քաշողից:

ՇԵՔՍՊԻՐ
(1564-1616)
Անգլիացի դրամատուրգ

Մահացավ՝ թաղեցին. արդ՝ գիշեր-ցերեկ հսկում են, որ գերեզմանից դուրս կելնի:

ՌԱՖԱՅԵԼ ՏԵՐ-ՍԱՐՅԱՆ
«Վրաստան» թերթի ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ - Կներե՛ք, դուք այնքան նման եք իմ երրորդ կնոջը:

- Իսկապե՞ս... Փաստորեն, դուք երեք անգամ ամուսնացել եք:

- Ո՛չ, երկու:

☺ Ճանապարհային ոստիկանությունում.

- Դուք հարբած վիճակում վրաերթի եք ենթարկել մի կնոջ:

- Պարո՛ն կապիտան, սթափ վիճակում չէի կարողանա... այնուամենայնիվ կինս է....

☺ Երկու ընկեր զրուցում են: Նրանցից մեկն ասում է.

- Գիտե՞ս, իմ ընկերուհին ոնց որ բջջային հեռախոս լինի:

- Հա՞, երեւի փոքրի՞կ, ժամանակակից ու ֆունկցիոնա՞լ:

- Չէ՛ հա, ուր էր, թե էդպես լիներ: Պարզապես, հենց որ փողս վերջանում է, հետս չի խոսում:

☺ - Չե՞ք ասի ձեր քաշը:

- Ո՛չ, չեմ ասի:

- Լավ գոնե սկզբի 3 թիվն ասեք:

☺ Սիրած տղայի հետ ժամադրությունից շուտ վերադարձած աղջիկը հեծկլտալով մտնում է տուն:

- Ի՞նչ է պատահել,- հարցնում է մայրը:

- Մայրի՛կ, էլի է եղել, որ նա անունս շփոթել է, մեկ Աննա է ասել, մեկ՝ Դիանա, ուշադրություն չեմ դարձրել: Բայց այսօր ինձ Վանկա անվանեց, հասկանո՞ւմ ես...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մարտի 15-ի առավոտյան Սերժ Սարգսյանն այցելեց Հայ Առաքելական եկեղեցու Մոսկվայի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդարան, ապա պատվիրակության անդամների հետ այցելեց Անհայտ զինվորի հուշարձանին եւ ծաղկեպսակ դրեց:

Նույն օրը Կրեմլում տեղի ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

Ռազմավարական գործընկեր երկու պետությունների ղեկավարները քննարկեցին հայ-ռուսական երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափով հարաբերությունների օրակարգին ու համագործակցությանը վերաբերող հարցեր, անդրադարձան տարբեր ոլորտներում բարձր մակարդակով ձեռքբերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքին:

Հանդիպմանը քննարկեցին ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացը, մտքեր փոխանակեցին միջազգային եւ տարածաշրջանային արդի խնդիրների ու մարտահրավերների շուրջ:

Նեղ կազմով հանդիպումից հետո, կայացան ընդլայնված կազմով բանակցություններ՝ երկու երկրների պատվիրակությունների անդամների մասնակցությամբ:

Հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցությունների ավարտին, Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները հանդիպման արդյունքներն ամփոփեցին զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջեւ հայտարարություններով: Բանակցությունների արդյունքում կողմերն ընդունել են համատեղ հայտարարություն:

* * *

Ռուսաստանի Դաշնություն պաշտոնական այցի շրջանակներում, Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Ռուսաստանի կառավարության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ:

Առանձնազրույցի ընթացքում, Հայաստանի նախագահը եւ ՌԴ վարչապետն անդրադարձան ռազմավարական գործընկեր երկու պետությունների միջեւ բոլոր ուղղություններով առկա փոխգործակցության ընթացքին, ամփոփեցին մինչ այժմ իրականացված աշխատանքների արդյունքներն ու քննարկեցին առեւտրատնտեսական համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Հայ-ռուսական երկկողմ հարաբերություններից բացի, Սերժ Սարգսյանը եւ Դմիտրի Մեդվեդեւն անդրադարձան նաեւ ԵԱՏՄ շրջանակներում փոխգործակցության մեխանիզմների արդյունավետ կիրառման հարցերին, մտքեր փոխանակեցին այլ պետությունների հետ ԵԱՏՄ համագործակցության զարգացման հեռանկարի եւ այդ ուղղությամբ երկու երկրների կողմից իրականացվող քայլերի շուրջ:

* * *

Պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մարտի 14-ին հյուրընկալվեց Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում, որտեղ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ բուհի ռեկտոր Անատոլի Տորկունովի, ինստիտուտի ուսանողության եւ պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ:

Հանդիպմանը հրապարակվեց բուհի գիտխորհրդի որոշումը՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին «ՄՄՀՊ-ի պատվավոր դոկտորի» կոչում շնորհելու մասին:

ԱՆԵԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը մարտի 17-ին անցկացրել է աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Ստեփանակերտում քաղաքային լուսավորության նոր՝ էներգախնայող համակարգի անցնելու հարցերը: Այս մասին տեղեկացրին Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից:

Երկրի ղեկավարը պահանջված է համարել նոր համակարգի ներդրումը՝ նշելով դրա առավելությունը տնտեսական տեսանկյունից:

Նախագահը կոնկրետ հանձնարարականներ է տվել շահագրգիռ մարմինների ղեկավարներին քննարկված հարցերի պատշաճ լուծման ուղղությամբ:

Խորհրդակցությանը մասնակցում էին վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք:

ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ 40 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ Է

Հայաստանում կենսաթոշակը եկամտի կարեւոր աղբյուր է, առավելապես՝ Երեւանից դուրս քաղաքաբնակ տնային տնտեսությունների համար: Պաշտոնական հաշվարկներով, եթե Հայաստանում դադարեցվի կենսաթոշակների եւ դրամական սոցիալական աջակցության վճարումը, ապա մեր երկրում աղքատության մակարդակը կհասնի աննախադեպ մակարդակի՝ ավելի քան 40%-ի:

Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության ամփոփ տվյալներով, 2016 թվականի վերջին երկրում կենսաթոշակառուների թիվը կազմել է 468 հազար 528 մարդ: Ընդ որում, աշխատանքային կենսաթոշակառուների թիվը կազմել է 466 հազար 170 մարդ, զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թիվը՝ 2 հազար 159 մարդ, այլ օրենքներով սահմանված կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների թիվը՝ 199 մարդ:

2016 թվականին Հայաստանում կենսաթոշակառուներին նշանակված կենսաթոշակի միջին չափը կազմել է 40 հազար 396,9 ՀՀ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2015 թվականին ցուցանիշը կազմել էր 40 հազար 441 ՀՀ դրամ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՔՉՅԱՆԸ՝ ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԵՂԱՊԱՀ

Ինչպես հաղորդում են ստամբուլյան «Մարմարա» թերթի թղթակիցները, մարտի 15-ին անցկացված Պոլսո Հայոց պատրիարքի տեղապահի ընտրությունների արդյունքներով, պատրիարքի տեղապահ ընտրվեց Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը:

Տեղապահի ընտրությունների արդյունքի հայտնի դառնալուց անմիջապես հետո, պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, որը պարտություն էր կրել, ներկայացրեց Ստամբուլի նահանգապետարանից ուղարկված մի փաստաթուղթ, որով տեղական իշխանությունները հայտնում էին տեղապահի ընտրությունները չճանաչելու, տվյալ ժամանակահատվածում պատրիարքի տեղապահի ընտրություններ անցկացնելու անհնարինության մասին: Ի պատասխան այս գրության, Արամ Աթեշյանի եւ Սահակ Մաշալյանի կողմից գլխավորած խումբը նախատեսում էր այցելել Ստամբուլի նահանգապետարան:

Իր հերթին, Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը հայտարարեց.

- Եթե Աթեշյանը տեղյակ էր այս գրությունից, անհրաժեշտ էր, որ նա դա ներկայացներ նախքան հավաքվելը: Մենք էլ որոշում կկայացնեինք դրան համապատասխան, սակայն ինչ լինելու էր, եղավ: Այս խնդրի լուծումը միայն մի տարբերակ ունի. դա Արամ Աթեշյանի հրաժարականն է,- հայտարարել է Պոլսո Հայոց պատրիարքի ընտրված տեղապահը եւ հավելել, որ պատրիարքի ընտրությունների հետ կապված խնդրի միակ լուծումը համարում է պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի հրաժարականը:

Նշենք, որ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը գրությունը հրապարակել է միայն այն ժամանակ, երբ պարզվել է, որ ինքը պարտվել է տեղապահի ընտրություններում:

ԱԵՆԻԿԱՅԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԸ

Մարտի 17-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի 2016 թվականի գիտական եւ գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներին նվիրված տարեկան ընդհանուր ժողովին: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց ակադեմիայի կազմակերպությունների գիտական կարեւորագույն արդյունքներն ու կիրառական մշակումները, անդրադարձավ հաշվետու տարում միջազգային համագործակցության ուղղությամբ իրականացված աշխատանքներին, գիտական կադրերի պատրաստման եւ գիտական հետազոտությունների ակտիվացման գործում ԳԱԱ ծրագրերին ու մի շարք այլ ուղղություններով 2016 թվականին ակադեմիայի գործունեությանը:

Նիստում Հայաստանի նախագահը՝ նշելով, որ ներկա դրությամբ երկրում նախընտրական քարոզչության ժամանակաշրջան է, զերծ կմնա ելույթից եւ պատրաստակամություն հայտնեց պատասխանելու ժողովի մասնակիցներին հետաքրքրող հարցերին, լսել նրանց առաջարկությունները: Սերժ Սարգսյանը նաեւ շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, պրոֆեսոր Սերգեյ Համբարձումյանին ծննդյան 95-ամյակի կապակցությամբ, այդ նշանակալի հոբելյանի առթիվ մաղթել նրան առողջություն եւ ազգանվեր գործունեությունը շարունակելու ուժ ու կորով:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը կարեւորեց մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունը՝ բարյացակամորեն գնահատելով այն աշխատանքը, որ իրականացվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտնող խնդիրների արդարացի լուծման գործում:

Զրույցի ընթացքում խոսվել է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող խնդիրների եւ դրանց հաղթահարման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին:

Հանդիպմանը ներկա է եղել Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արտաքողոքարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(17 մարտի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	482,30	484,70
ԵՎՐՈ	517,00	524,00
ՌՈՒԲԼԻ	8,27	8,45

Մարտի 10-ի համեմատությամբ. ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 2,2 դրամով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՐՏ



19.03.2017. Տնտեսի կիրակի

22.03.2017. Միջինք

«Միջինք» անունը տրվում է Մեծ պասը կիսող օրվան, որը տոնական նշանակություն չունի: Այդ օրը, ըստ ժողովրդական ավանդության, հայ տանտիկիները թխում են բաղարջ, որի մեջ մետաղադրամ են դնում: Ում բաժին ընկնի այդ դրամը, այդ տարի հաջողություն կունենա:

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ

ԱՂՄԿԵԼԸ ԿՊԱՏԺՎԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքում կատարած փոփոխությունների համաձայն, 2017 թվականի հուլիսի 1-ից աղմուկը կհամարվի որպես իրավախախտում:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի սակրեբուլոյի իրավաբանական հանձնաժողովի նախագահ Թեդո Կոբախիձեն, սակրեբուլոյի հատուկ հանձնաժողովն արդեն ավարտել է օրինանախագծի մշակումը, եւ այն ներկայացվել է խորհրդարանին: Այսուհետ, բարձր աղմուկը կպատժվի ինչպես ցերեկվա, այնպես էլ՝ գիշերային ժամերին: Առաջին փուլում օրինանախագիծը որպես գիշերային ժամ նախատեսում է 23:00-ից մինչեւ 07:00-ն:

Ցերեկային ժամերին աղմուկի թույլատրելի մակարդակը կկազմի 40 դեցիբել, իսկ գիշերային ժամերին՝ 30 դեցիբել:

Առաջին փուլում տուգանքը կկազմի 150 լարի, իրավաբանական անձի դեպքում՝ 500 լարի:

Տարվա ընթացքում իրավախախտման կրկնության դեպքում, տուգանքի գումարը կրկնապատկվում է:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈ

ՊՈԵԶԻԱՆ ՄԵՐՁԵԾՆՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՑ

Մարտի 13-ին, Վրաստանի խորհրդարանի պետական գրադարանում, տեղի ունեցավ ճանաչված հասարակական գործիչ, Շոթա Ռուսթավելու անվան համավրացական ընկերության նախագահ, բանաստեղծ Դավիթ Շեմոքմեդելու (Տակահիձե) ստեղծագործական երեկոն:

Երեկոն լայն արձագանք առաջացրեց Թբիլիսիի հասարակայնության, այդ թվում՝ մայրաքաղաքի հայկական համայնքի շրջանում, եւ դա զարմանալի չէ, քանի որ վրաց բանաստեղծը բարեկամական ու ստեղծագործական սերտ կապեր էր պահպանում վերջերս վախճանված բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանի հետ: Լսարանին, Դավիթ Շեմոքմեդելու մի քանի նոր գրքերի հետ միասին, ներկայացվեց նաեւ բանաստեղծությունների այն գիրքը, որը Անահիտը թարգմանել էր հայերեն: Ցավոք, անժամանակ մահը նրան թույլ չտվեց մասնակցել այդ գրքի շնորհանդեսին: Թեպետ նրա անտեսանելի ներկայությունը դահլիճում նկատելի էր, երբ Դավիթ Շեմոքմեդելու առաջարկությամբ հավաքվածները մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեցին բանաստեղծուհու հիշատակին: Ներկաներից այդ մասին ջերմ խոսքեր ասաց ճանաչված բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Ստեղծագործական երեկոյին հնչեցին բանաստեղծի ստեղծագործություններից ինչպես հեղինակի, այնպես էլ՝ մյուսների ընթերցմամբ, հնչեցին երգեր վրաց շնորհալի երաժիշտների կատարմամբ:

ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ-2017»

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԱՐԶԱՊԱԼԱՏՈՒՄ

Հայտնի են դարձել միջազգային ամենամյա «Մանկական եվրատեսիլ-2017» մրցույթի անցկացման օրն ու ժամանակը:

Նշենք, որ Վրաստանը թվով 15-րդ մրցույթի անցկացման իրավունքն ստացավ նրանից հետո, երբ «Մանկական եվրատեսիլ-2016» մրցույթում 17 երկրների ներկայացուցիչներից հաղթող դարձավ Վրաստանից տասնամյա Մարիամ Մամադաշվիլին:

Ինչպես նշեցին «Մանկական եվրատեսիլի» կազմակերպիչները, այս տարի մրցույթը կանցկացվի Թբիլիսիի մարզապալատում, նոյեմբերի 26-ին: Վրաստանում մանկական երգի փառատոնի արդեն տասնմեկերորդ անգամ ներկայացուցիչ է հայտարարվել Հանրային հեռուստատեսությունը:

Նշենք, որ մանկական երգի փառատոնի 14-ամյա պատմության մեջ Վրաստանը միակ երկիրն է, որը երրորդ անգամ հաղթում է այդ մրցույթում, ինչը ռեկորդային է համարվում:

ՀԻՇԱՏԱԿ

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳԵՆՈ ԿԱԼԱՆԴԻԱՆ

Յոթանասունուք տարեկան հասակում վախճանվեց բանաստեղծ, Վրաստանի գրողների միության՝ Աբխազիայի կազմակերպության նախագահ Գենո Կալանդիան:

Գենո Կալանդիայի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել Սուխումիում, 1967 թվականին: Նա տարբեր տարիների եղել է Աբխազիայի Գ.Շարվաշիձեի անվան պետական մրցանակների կոմիտեի նախագահ, Աբխազիայի Գերագույն խորհրդի պատգամավոր, Վրաստանի գրողների միության՝ Աբխազիայի կազմակերպության նախագահ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր: 1994 թվականին նա պարգեւատրվել է Վրաստանի պետական մրցանակով:

Գենո Կալանդիայի բանաստեղծությունները թարգմանվել են աշխարհի մի շարք լեզուներով, այդ թվում՝ հայերեն: Նրա գործերը Միքայել Ախտյանի, Անահիտ Բոստանջյանի, Արմեն Մարտիրոսյանի եւ ուրիշների թարգմանությամբ հայերենով հրապարակվել են Հայաստանի պարբերական մամուլում, գրական ժողովածուներում, այդ թվում՝ «Կամուրջ» տարեգրքում:

Գենո Կալանդիայի հուղարկավորությունը կկայանա կիրակի՝ մարտի 19-ին, ժամը 13:00-ին, Թբիլիսիի Սիոնի տաճարից:

«Վրաստան» թերթը վշտակցում է բանաստեղծ Գենո Կալանդիայի մահվան կապակցությամբ եւ խորապես ցավակցում հանգուցյալի հարազատներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հայկական էպոսի հերոսների երկիրը: 6.Հերոսուհի «Կովկասի գերուհին» ֆիլմում: 10.Տարվա եղանակ: 11.Բաց ոտքերով: 13.Էլեկտրական, նավթի լուսատու: 14.Որեւէ գրվածքի կամ գրքի առաջաբանը: 18.Նար-Դոսի «Ես եւ ...» վիպակը: 19.Մեծբրիտանական-ամերիկյան համատեղ ֆիլմ՝ «... 007»: 21.Թեքել, շեղել: 22.Իտալական ալկոհոլային խմիչք: 24.Հերոս Գ.Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունում, ում դերը մարմնավորել է նաեւ ծնունդով թբիլիսցի, դերասան էդգար Էլբակյանը: 26.Գայլի ձայնը: 28.Բռի, կոպիտ: 30.Մագման սառելուց հետո: 33.Անշունչ առարկա: 34.Անմարդկային, տմարդի: 35.Ավարայրի հերոս: 37.Ծառի տեսակ: 38.«Արարատ 73»-ի կիսապաշտպան ... Անդրեասյան: 42.Մոլդովայի դրամական միավորը: 44.Ծլարձակած ցորեն: 45.Թագավոր, միապետ: 47.«Ձյուն-ձմեռ էր, ...ն ելել, ձյուներն էի թափում ցած» (Հ.Շիրազ): 49.Ոստայն հյուսող միջատ, մորմ: 52.Ընտանի կենդանի: 54.Մ.Շոլոխով «Խաղաղ ...»: 55.Քաղաք ՌԴում: 56.Ա.Խաչատրյանի բալետներից: 57.Ռուս երգչուհի Անիտա ...: 58.Հայաստանի մայրաքաղաքներից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անվանի դերասան ... Գասպարյան: 3.Մոնղոլիայի մայրաքաղաքը՝ ... Բատոր: 4.Կուբայի գլխավոր քաղաքը: 5.Վրաց երգիչ եւ դերասան Վախթանգ Կիկաբիձեն՝ մտերիմների շրջանում: 7.Վրաց պատմաբան ... Ջավախիշվիլի: 8.Ավ.Իսահակյանի «...ի սերը»: 9.«..., ծարավ, բոկոտն ընկնում սար ու ձոր» («Հին մանկություն»): 12.Մայր..., ...ային: 15.Հայֆիլմ «..., ես եմ»: 16.Վրաց հայտնի դերասանուհի ... Վաչնաձե: 17.Հայ թատրոնի անվանի դեմքերից, դերասանուհի, թատերագետ ... Գուլազյան: 20.Հերոս Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպում: 23.«Գալարվում է գիժ Դեւբեդը ...» (Հովհ. Թումանյան): 25.Հայ գրող Մուշեղ ...: 27.Նրա ... գործերը պահվում են տարբեր պատկերասրահներում: 28.Փոքր առու: 29.Քաղաք էստոնիայում, Դորպատն այսօր: 31.Ամերիկահայ նկարիչ ... Գորկի: 32.Ոչ հայտնի, չպարզաբանված: 36.Թաղամաս Երեւանում: 39.Արեւմտյան Հայաստանի այս քաղաքն անվանել են «Կովկասյան Դավոս»: 40.Ֆրանսիացի գրող Դենի ...: 41.Փոքրացնող մասնիկ: 43.Թբիլիսիի Սուրբ Գեւորգ, Սուրբ Էջմիածին: 45.Հայերիս սրբացրած լեռը: 46.Լեհ գրող ... Միցկեւիչ: 48.Ռուսաստանի մայր գետը: 50.ԱՄՆ-ի երկրորդ պրեզիդենտը: 51.Գետ Ուկրաինայում: 53.... եւ կենտ թվեր:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Յունիսեֆ: 9.Արշավ: 10.Լիտր: 11.Բելգրադ: 13.Ամիգո: 16.Լեռ: 17.Ռես: 19.Անդին: 22.Պրահա: 24.Չոչարա: 25.Արկղ: 27.Դասվար: 29.Ստադիա: 32.Աճպարար: 33.Ընձյուղ: 35.Անոխ: 37.Ամի: 39.Արենա: 40.Տհաս: 43.Լիր: 44.Գորի: 47.Նիտ: 49.Սուրմա: 50.Եվլե: 53.Փոկա: 54.Ջոն: 55.Ավազ: 57.Նաեւ: 58.Դոնալդ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մուծել: 2.Ռինգո: 3.Խելառ: 4.Նարա: 5.Իշլի: 6.Եվրո: 8.Ֆիդել: 12.Լենա: 14.Մանչ: 15.Գզիր: 18.Ծառա: 19.Աորտա: 20.Դարդանել: 21.Նանա: 23.Հավայի: 26.Կրաղ: 28.Ակնա: 29.Սպի: 30.Արար: 31.Իրոնիա: 34.Ձմերուկ: 36.Խար: 38.Բաի: 41.Հնաձեւ: 42.Ստենդ: 45.Ոսոխ: 46.Իրան: 48.Ալան: 51.Եվա: 52.Ազդ: 56.Ալ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445